ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. ապրիլի 19-ին Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ)՝ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Իրինա Ղափլանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ)

   2019թ. ապրիլի 19-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության /OECD/ գրասենյակ:

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**
   Մասնակցություն՝ «Հանքարդյունաբերությունը և կանաչ աճն Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում» խորագրով աշխատաժողովին:

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներների փորձի փոխանակման վերաբերյալ նստաշրջանում ներկայացրեցի Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի առկա վիճակը, ընթացիկ բնապահպանական մարտահրավերները, ոլորտի հիմնահարցերը՝ անդրադարձ կատարելով ոլորտը կարգավորող առկա օրենսդրական դաշտին, ընթացիկ բարեփոխումներին, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցությունը ոլորտում իրականացված գործունեության հետևանքով: Մասնավորապես, անդրադարձա նաև կառավարության տեսլականին՝ այն մարտահրավերների առնչությամբ, որոնք անհրաժեշտ են հասցեագրել առաջընթացն ապահովելու նպատակով՝ որպես այդպիսիք նշելով լքված բաց հանքերի և ընդերքաօգտագործման թափոնների

տեղամասերի և փակված օբյեկտների կայուն կառավարման նախադրյալների ստեղծումը, համապարփակ տեղեկատվական բազայի և գործողությունների ծրագրերի փաթեթների մշակումը, մոնիթորինգի համապարփակ համակարգի, ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետվողականության միջազգային չափանիշներին համապատասխան գործելաոճի ներդրումը:

Քննարկումների ընթացքում երկրները ներկայացրեցին հանքարդյունաբերության, կանաչ աճի և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առկա առանձին մարտահրավերները:

Վրաստանի մասնակիցը ներկայացրեց ոլորտի առկա հիմնահարցերը, մասնավորապես նշելով, որ ներկայիս հանքարդյունաբերությունը Խորհրդային միության «ժառանգությունն» է և ոլորտում համապատասխան կարգավորումները դեռևս շատ քիչ են: Թեև իրականացվում են մի շարք հետազոտական աշխատանքներ, սակայն որևէ շոշափելի առաջընթաց դեռևս չկա՝ ոլորտում պատշաճ օրենսդրության, ինչպես նաև համապատասխան մարդկային ներուժի բացակայության պատճառով:

Ուշագրավ է Շվեյցարիայի փորձը հանքարդյունաբերության ոլորտում, որն, ըստ պատվիրակի, չունի հանքարդյունաբերություն և հարուստ չէ հանքանյութերով: Հիմնահարցի վերաբերյալ վերլուծությունից պարզ դարձավ, որ, Շվեյցարիայի հանքարդյունաբերության դադարեցման առաջնային պատճառը բնապահպանականն է, մինչդեռ որոշ հանքանյութեր նաև չարաշահվել են:

Նման քաղաքական որոշմանն աջակցություն հայտնելու և Հայաստանի կողմից հանքարդյունաբերությունն առաջնահերթություն չհամարելու վերաբերյալ որոշման կայացման դեպքում ճիշտ կլինի համագործակցել Շվեյցարիայի հետ, մասնավորապես բացահայտելու համար նմանօրինակ որոշման ազդեցությունը տնտեսության վրա:

7. <u>ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ</u>

Տեղի ունեցավ հանդիպում ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի ներկայացուցչի հետ, որը տեղեկացրեց թափանցիկության գնահատման նոր ծրագրի մեկնարկի վերաբերյալ, որը կօգնի երկրներին կարգավորելու բնապահպանական տեղեկատվության և հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող հիմնահարցերը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել առավել ընդգրկուն տեղեկատվության տրամադրման վերաբերյալ:

8. ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության բնապահպանական բաժնի ծրագրերի գլխավոր կառավարիչը տեղեկացրեց, որ ս.թ. հունիսին տեղի կունենա կայուն հանքարդյունաբերության մասին հերթական միջոցառումը, որին ակնկալվում է նաև բնապահպանության նախարարության մասնակցությունը:

Բնապահպանության նախարարի
առաջին տեղակալ՝

Իրինա Ղափլանյան